

# ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅ ՄԵԾ ՀՌԵՏՈՐՆ ՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՆ. ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅԿԱԶՆ

### ՄԻԼՎԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայոց փիլիսոփայության պատմության վաղ շրջանի հետաքրքիր ներկայացուցիչներից է IV դարի իմաստասեր և հռետոր Պարույր Հայկազնը (Պրոյերեսիոս), որի անունը նախանցյալ դարի անգլիացի հայագետ Ֆ. Կոնիբիրը փորձում էր կապակցել հայ նորալատոնական իմաստասեր Դավիթ Անհաղթի անվան հետ<sup>1</sup>: Ուսումնասիրելով Արիստոտելի հայերեն թարգմանությունների հարցը՝ Կոնիբիրը հանգում է Դավթի անձնավորության խնդրին՝ գրելով. «Գիտենք, օրինակի համար, որ Պրոյերեսիոս հռետորն, ուսուցիչն Յուլիանոս, Բարսղի եւ Գրիգորի Նազիանզացոյ, հայազգի մըն էր Պարսից սահմանակից տեղերեն. դարձեալ որ երբ ինքն ուսուցիչ էր Աթենքի մէջ, «ամենայն Պոնտոս եւ ազգք որ շուրջ գնովաւ, առաքէին առ նա զաշակերտս իւրեանց, հիացեալ ընդ նա՛ իբրեւ ընդ սեպհական զարդ իւրեանց աշխարհին (ωσπερ οικειον αγαθον)»<sup>2</sup>: Իրեն շատ աւելի ապահովութեամբ, քան ուրիշ մէկու մը կրնանք տալ Արիստոտելի գործոց թարգմանութիւնքն հանդերձ մեկնութեամբ: [...] Արդեօք հայկական աւանդութիւնը շփոթած չէ՞ զՊրոյերեսիոս – որուն հայկական անունն անձանօթ է, եւ որ արդեամբք այն համբաւաւոր անձանց ուսուցիչն էր, Դաւթի՝ Մահմանաց եւ Ներածութեան մեկնութեան հեղինակին հետ, որ գրեթէ դար մ'ետք ապրած է»<sup>3</sup>: Ինչ խոսք, Կոնիբիրը սխալվում է, քանի որ հայոց ավանդույթը չի շփոթում Պրոյերեսիոսին Դավթի հետ՝ հստակ նշելով, որ Դավիթը V դարի գործիչ է: Այնուամենայնիվ, Կոնիբիրի առաջ քաշած զուգահեռն ունի իմացական նշանակություն, քանի որ հնարավորություն է տալիս Պրոյերեսիոսի կյանքին դիմելով՝ հասկանալու այն մշակութապատմական համատեքստը, որում նվազագույնը կէս դար անց պետք է գործեր նաև Դավիթ Անհաղթը: Պրոյերեսիոսի մասին դիսկուրսն առավել կարևորվում է այն առումով, որ հունարեն պահպանված գրականության մեջ առայժմ հայտնի չէ որևէ անդրադարձ Դավթի անձին ու գործունեությանը, այնինչ Պրոյերեսիոսին անդրադարձել են

<sup>1</sup> Տե՛ս Փր. Կ. Կոնիբիր, Քննութիւնք գրոց Դաւիթ Անյաղթի կամ թարգմանութեանց Արիստոտելի, Վիեննա, Մխիթարեան տպարան, թարգմ. անգլերենից, 1893, էջ 35-36:

<sup>2</sup> Կոնիբիրը վկայակոչում է Եվնապիոսի «Փիլիսոփաների և սոփեստների կյանքը» երկի «Վարք Պրոյերեսիոսի» հատվածը:

<sup>3</sup> Փր. Կ. Կոնիբիր, նշվ. աշխ., էջ 35-36:

և՛ կենսագիրները, և՛ մրցակիցները, և՛ անգամ կայսրերը: Եվ եթե հայոց ավանդույթը սուկ խնդիր ունենար փիլիսոփայության դաշտում հպարտության առարկա որոնելու, ապա կարիք չէր լինի հնարելու ինչ-որ նոր բան, ստեղծելու «մտացածին կերպար»<sup>4</sup>, քանի որ կար Պրոյեկտեսիոսն իր փառքով և հեղինակությամբ, որը լիովին արժանի կլիներ այդպիսի դեր կատարելու: Սակայն անտեսելով այս «շքեղ» փաստը՝ հայոց տեքստերում ավելի շատ խոսվում է արևմտյան աղբյուրներում լռության մատնված Դավիթի մասին, քանի որ վերջինս կարևոր դերակատարություն է ունեցել հայոց արդի քաղաքակրթային, հոգեմտավոր տեսակի ձևավորման գործում:

Պարույր Հայկազնը (Պրոյեկտեսիոս) և Դավիթ Անհաղթը (Դավիթ Արմենիոս), ի տարբերություն շատ այլ հայ մտածողների, ընդունված են եղել իրենց ժամանակի արևմտյան՝ հունահռոմեական գիտակրթական աշխարհում: Թեպետև ապրել ու գործել են նվազագույնը կես դարի տարբերությամբ, երկուսն էլ պատկանում են մինևույն հոգեմտավոր մշակութային դարաշրջանին, որը փիլիսոփայության արդի պատմաբաններն անվանում են ուշ անտիկ շրջան (*late antiquity*), և որին բնորոշ էր անտիկ դասական փիլիսոփայական գործերի մեկնության էկզեգետիկ ոճը և հռետորության, տրամաբանության ու փաստարկումների համադրական եղանակը<sup>5</sup>: Կրթություն ստանալով ժամանակի հունախոս աշխարհի լավագույն կրթօջախներում՝ ուսումնառության ավարտից հետո երկուսն էլ մնացել են այդ կրթական կենտրոններում և տարիներ շարունակ դասավանդել: Սակայն պատմական հանգամանքների բերումով նրանց կյանքի ու գործունեության նկարագրերն ու փիլիսոփայական ժառանգությունը տարբեր, նույնիսկ տրամագծորեն հակառակ ճակատագրերի են արժանացել: Յավոք, Պրոյեկտեսիոսից չի

---

<sup>4</sup> Արդի գիտական շրջանակներում հարգանք վայելող Վեստերինկը, հավանաբար չգիտակցելով իր վերաբերմունքի կանխակալությունն ու միակողմանիությունը, գրում է. «Դավիթը նույնիսկ պակաս հայտնի է, քան Էլիասը: Հայկական աղբյուրներում պահպանված մանրամասն կենսագրական տվյալները վերաբերում են հինգերորդ դարի աստվածաբանի, մինչդեռ «ամենահարգարժան և նվիրյալ փիլիսոփան», որի *Psuedo-epistolei Nestoriana* մենք ունենք, ենթադրաբար վեցերորդ դարի երկրորդ կեսի կամ նույնիսկ յոթերորդ դարի ուշ օլիմպիոդորական է: Հայերեն տեքստը թարգմանություն է հունարենից, այլ ոչ թե հակառակը: Հետևաբար, հայկական ավանդույթի Դավիթը այդ երկու տարբեր անձերի շփոթմունքի արդյունք է կամ *մտացածին կերպար՝ հույն մեկնաբանի անունով կոչված*, որի գործերը Հայաստանում այնուհետև դառնում են հայ գրականության դասական գործեր» (**Westerink L. G.**, *The Alexandrian Commentators and the Introductions to Their Commentaries* // Sorabji R., (ed.), *Aristotle Transformed, The Ancient Commentators and Their Influence*, Ithaca, New York, Cornell University Press, 1990, էջ 339, ընդգծումներն իմն են – Ս. Պ.): Սակայն հունարենից թարգմանվածը չի նշանակում, որ հեղինակն անպայման հույն է...

<sup>5</sup> Այդ շրջանի մասին առավել մանրամասն տե՛ս, օրինակ, **E. J. Watts**, *Sity and School in Late Antique Athens and Alexandria*, University of California Press, Berkeley, LA, London, 2006; **Ph. Rosseau** (ed.), *A Companion to Late Antiquity*, Blackwell Publishing, Chichester, 2009; **J. Lossi and J. Watt** (eds.), *Interpreting the Bible and Aristotle in Late Antiquity. The Alexandrian Commentary Tradition Between Rome and Baghdad*, Ashgate, Farnham, 2011:

պահպանվել որևէ իմաստասիրական երկ կամ հայտնի ճառ, այնինչ Դավթի անվամբ պահպանվել են մի շարք գրվածքներ թե՛ հունարեն, թե՛ հայերեն<sup>6</sup>: Եթե Պրոյերեսիոսի մասին բազմաթիվ վկայություններ կան հունարեն պահպանված աղբյուրներում՝ կենսագրությունից մինչև մահախոսական, նամակներից մինչև ձոներ, ապա Դավիթը մատնված է լուրջան. նրան չեն հիշատակում ո՛չ ժամանակի իմաստասերները, ո՛չ հաջորդները: Հակառակ այս հանգամանքին՝ Դավիթ Անհաղթին հայոց փիլիսոփայապատմական ավանդությունն է շատ բարձր դասել, նրա երկերը բազմիցս արտագրել ու մեկնել են, իսկ եկեղեցին նրան սրբացրել է, այնինչ Պարույր Հայկազնը կարծես թե լիովին անտեսված է հայոց միջնադարյան փիլիսոփայապատմական ավանդության մեջ: Եվ նրա անունը հայ ընթերցողին ամենայն հավանականությամբ հայտնի է դարձել Գ. Զարբհանալյանի շնորհիվ: Նա վկայում է, որ Պարույրը «այնչափ անուանի եղաւ ճարտարախօսութեան ուսման և հրահանգաց մէջ՝ որ ինչուան Աթենքի եւ Հռոմայ մէջ արձաններ կանգնեցին իրեն պատուոյն ու թագաւոր ճարտարախօսաց կոչեցին: Սակայն ցաւալին այն է, որ այսպիսի հայկական դպրութեանց պարծանք անուանի անձին վրայ՝ մեր նախնիք տեղեկութիւն մը չեն տար, ու կստիպեն, որ օտար աղբերաց դիմելով՝ ազգային ճոխութեան խելամուտ ըլլանք»<sup>7</sup>: Պարույրի անունը հայ լայն հասարակայնությանը հայտնի դարձնելու մղումով Բաֆֆին Զարբհանալյանի երկի հիման վրա գրում է պատմավեպ. «Մենք եղանք առաջինը, որ մտանք պատմության խորքերը և մոռացության վիհից ի լույս ածեցինք հայոց հին ժամանակների հերոսներին, երբ գրեցինք «Դավիթ Բեկը», «Պարույր Հայկազնը», «Սամվելը» և թարգմանեցինք «Ղարաբաղի աստղագետը»<sup>8</sup>: Ցավոք, Պարույրին նվիրված այդ երկը ժամանակի գրաքննադատները համարել են «թույլ և անմշակ, թե՛ բովանդակության և թե՛ լեզվի կողմից»<sup>9</sup>: Մի կողմ թողնելով երկի գեղարվեստական արժանիքների հարցը՝ նշենք միայն, որ Բաֆֆին կամայականորեն թույլ է տալիս «մի փոքրիկ անախրոնիզմ»՝ Պրոյերեսիոսին և Մովսես Խորենացուն ներկայացնելով որպէս ժամանակակիցներ<sup>10</sup>: Գնահատելով անցյալի արժեքները ժամանակակից հայ հասարակության սեփականությունը դարձնելու Բաֆֆու լուսավորա-

<sup>6</sup> Պահպանված որոշ տեքստերի հունարեն վերնագրերում Դավիթն անվանվում է «*geofilestavtos kai geofrwn*»՝ «ամենաստվածասեր և աստվածիմաց» փիլիսոփա, ինչը վկայում է հունախոս աշխարհում նրա ճանաչված լինելու մասին:

<sup>7</sup> Գ. Զարբհանալեան, Պատմութիւն հայերէն դպրութեանց, Ա. Հին մատենագրութիւն, Վենետիկ, ի տպարանի Մխիթարեանց, 1865, էջ 150:

<sup>8</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 7, Ծանոթագրություններ, էջ 598:

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> «Գրելով «Պարույր Հայկազն» մենք թոյլ տուեցինք մեզ մի փոքրիկ անախրոնիզմ անել, որպէս զի Պարույրի և Խորենացու ժամանակները մօտեցնենք միմեանց, թէև շատ հեռու չեն: Իսկ պատմական ճշտութիւնները պահպանեցինք, որքան ներելի է բանաստեղծութեան մէջ», - գրում է Բաֆֆին երկն ամփոփող ծանոթագրությունում (Բաֆֆի, Պարույր Հայկազն (Պրոյերեսիոս), Թիֆլիս, Տպարան Մ. Վարդանեանի, 1894, էջ 116):

կան մղումը՝ այնուամենայնիվ նկատենք, որ նման անախրոնիզմ թույլ տալով և Պարույրի անկիրք, հաշտվող կերպարը Խորենացու հայրենասիրական ձգտումներին հակադրելով, Բաֆֆին Պարույրին ինչ-որ իմաստով ներկայացրել է որպես հակահերոս՝ ընդգծելու համար Մովսես Խորենացու ողբերգական կերպարը<sup>11</sup>: Փորձելով պատասխան գտնել այն հարցին, թե ինչու է հայոց փիլիսոփայապատմական ավանդույթը լռում Պարույրի մասին, Բաֆֆին ենթադրյալ լուծումը տալիս է Խորենացի-հերոսի շուրթերով. «Արևելքի և արևմուտքի կայսրը այդ հրովարտակով հրաւիրում է ձեզ իւր մօտ: Իսկ միւս կողմից, անբախտ հայրենիքը իմ բերանով կոչում է ձեզ: Դուք մերժում եք նորա ձայնը, և այդ պատճառով անարժան եք Հայաստանի գաւակ կոչվելու»<sup>12</sup>: Այո՛, Պարույրը, ի տարբերություն Դավթի ու Մովսեսի և շատ այլոց, այդպես էլ չվերադարձավ Հայաստան, դասավանդեց Աթենքում, իր ողջ կենսուժը, արտակարգ օժտվածությունը նվիրեց այդ քաղաքակրթությանը և մահացավ այնտեղ: Սակայն նա չտեսավ հայոց գրերի ստեղծումը, չիմացավ թարգմանչական հզոր շարժման ու քաղաքակրթային մեծ ծրագրի մասին, որ պետք է սկսվեր իր մահվանից մի քանի տասնամյակ անց<sup>13</sup>: Բաֆֆին դրամատիկ բախում ստեղծելու նպատակով նրան իր ժամանակից տեղաշարժելիս չի մտածում, որ մինչև գրերի գյուտն ու դրանից հետո տարբեր հանգամանքների ու մտածելակերպերի հետ գործ ունենք: Ինչևէ: Հրնթացս նշենք նաև, որ Բաֆֆու հերոս Խորենացին Դավթին անվանում է «անհաղթ», թեպետ մինչև 10-րդ դարը ձե-

<sup>11</sup> Երիտասարդ Խորենացին Բաֆֆու վեպում խնդրում է Պարույրին գալ Հայաստան ու ծառայել հայրենիքին, քանի որ պետականությունը կորցրած ազգը դեմ հանդիման կանգնած է ուժացման վտանգի առջև: Նա Պարույրին համոզելիս ասում է. «Եւ մեծ Հայրապետը [Սահակ Պարթևը – Ս. Պ.] աշխատեց վտանգի առաջը առնել: Նա գիտէր, որ հայը կորցնելով իւր անկախութիւնը, մի ժամանակ դարձեալ կարող էր անկախութիւն ձեռք բերել, եթէ ազգը կենդանի կը մնար: Բայց հայը կորցնելով իւր լեզուն, կը դադարէր ապրել իբրև առանձին ազգ, նա կլինէր յոյն, ասորի, պարսիկ, կամ այն ազգերից մէկը, որոնց լեզուով խօսում էր: Այդ մեծ չարիքի առաջը առնելու համար ձեռք առին ժողովրդի կրթութեան գործը: Հարկատր էր ամեն ինչ հայացնել, ամեն ինչ ազգային դարձնել: [...] Այն փառքը, այն հռչակը, որ դուք վայելում եք այստեղ, շլացրել են ձեզ: Թողնել այդ բոլորը և գնալ թշուառ հայրենիքը, ուր շատ զոհողութիւններ է պահանջվում գործիչներից, - դա վախեցնում է ձեզ: Մեր ընկերները Դաւիթ Անյաղթը, Եղիշէն, Եզնիկը, Ղազար Փարպեցին, Կորիւնը, իմ եղբայր Մամբրէն, Յովսէփը, Ղևոնդը, մի խօսքով, բոլոր ուսանողները, որոնք զանազան երկրներում էին գտնվում, այժմ վերադարձել են կամ վերադառնալու վրա են: Մնացել ենք ես և դուք: Գնանք, չը յապաղենք, հայրենիքը կոչում է մեզ: Գնանք գիտութիւն և լուսավորութիւն տարածենք մեր աշխարհում...»: Երիտասարդ Մովսեսի այս կրակոտ խոսքին Բաֆֆու Պարույրը պատասխանում է. «Գործեցէք դուք, կամ ով որ ցանկանում է ձեզ հետ, փոքրիկ շրջաններում, կամենում եմ ասել մարդկութեան առանձին բաժինների մէջ, որ դուք ազգ եք կոչում: Բայց իմ հայրենիքը ամբողջ աշխարհն է, իսկ իմ հայրենակիցները – ամբողջ մարդկությունը» (Բաֆֆի, Պարույր Հայկազն (Պոյերեսիոս), էջ 32-33; 36-38):

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 40:

<sup>13</sup> Քաղաքակրթային այդ հզոր հոսանքի փիլիսոփայական վերլուծությունը տե՛ս Գեвоքյան Գ. Ա. Иллюстрирующий пример: Давид Анахт, христианство, неоплатонизм // Գեвоքյան Գ. Ա. Национальная культура с точки зрения философии истории. Ер., 1992, էջ 73:

ռագրերում նրան այդպես չէին կոչում:

Բաֆֆու երկը ընկալելով որպես սուկ գեղարվեստական փաստ՝ այժմ անդրադառնանք այն տեքստերին, որ թողել են Պրոյերեսիոսի իրական հետևորդները: Երախտապարտ աշակերտները նրան ձոնել են բանաստեղծություններ<sup>14</sup>, իսկ ամենակրտսերը աշակերտներից՝ Եվնապիոսը, գրել է նաև նրա կենսագրությունը՝ ի թիվս այլ փիլիսոփաների՝ ամենամեծ համակրանքը տաճելով Պրոյերեսիոսի հանդեպ: Եվ սա այն դեպքում, երբ Պրոյերեսիոսը քրիստոնյա էր, իսկ ինքը՝ հեթանոս: Ու որպես այդպիսին՝ Եվնապիոսը հայտնի է քրիստոնյաների հանդեպ իր բացասական վերաբերմունքով: Պատրիարք Փոստը նշում է, որ քրիստոնյա կայսրերի մասին պատմելիս Եվնապիոսը զերծ չի մնում պարսավական ու հայեցողական արտահայտություններից<sup>15</sup>: Բայց այդ ամենով հանդերձ՝ նա քրիստոնյա Պրոյերեսիոսի մասին խոսում է ակներև ակնածանքով, ինչը վկայում է հայ իմաստասերի բացառիկ հեղինակության մասին:

Տեսնենք, թե ինչպես է նկարագրում ծերունի Պրոյերեսիոսին երիտասարդ պատմիչը. «Այժմ Պրոյերեսիոսը հասել էր իր 87-րդ տարուն, ինչպես պնդում էր ինքը: Այս առաջացած տարիքում նրա մազերը գանգուր էին և շատ խիտ, առատ սպիտակ մազերն արծաթագոծել էին նրան՝ հիշեցնելով ծովի փրփուրը: Նրա հոետորական ձիթն այնքան հզոր էր, և նա իր մաշված մարմինն այնպես էր պահպանել իր հոգու երիտասարդության շնորհիվ, որ *այս տողերի հեղինակը նրան համարեց անտարիք և անմահ էակ, որին ունկնդրեց ասես աստծո, որ հայտնվեց իրեն առանց կանչի և արարողակարգի*»<sup>16</sup> (ընդգծումն իմն է – Ս. Պ.): Եվնապիոսը Պրոյերեսիոսին բազմիցս անվանում է «աստվածային» (θειοτατος)<sup>17</sup>, ճիշտ այնպես, ինչպես ընդունված էր ժամանակի խոսույթի կարգում: Աստվածային էին համարվում Պյութագորասը, Պլատոնն ու Արիստոտելը, Պլոտինը և այլ մտածողներ: Հետաքրքրական է, որ Դավիթ Անհաղթն իր երկերում ներկայացնում է ուշ անտիկ աշխարհի մտածողության այդ յուրակերպությունը՝ բերելով Դելփիքի ապոլոնյան տաճարի գուշակուհու բնորոշումները. «Ուսեալք հաղագս Պորփիրի թէ ուստի, ուստի Յամդիքոս, յաղագս որոց ասաց Պիրիա, թէ աստուածային Ասորին և բազմուսումն Փինիկեցին: Բազմուսումն Փինիկեցի գՊորփիրոս ասելով, և աստուածային Ասորի՝ զՅամդիքոս. վասնզի աստուածաբանութեամբ միշտ պարապէր»<sup>18</sup>: Դավիթը դա բա-

<sup>14</sup> Գրիգոր Աստվածաբանի ձոնի հայերեն թարգմանությունը տե՛ս **Գ. Զարբանալեան**, Հայկական հին դպրութեան պատմություն, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1867, էջ 264: Այն որպես պատմավեպի Դ մասի բնաբան բերում է նաև Բաֆֆին:

<sup>15</sup> Տե՛ս **Rohrbacher, D.**, *The Historians of Late Antiquity*, Routledge, London and NY, 2002, էջ 68:

<sup>16</sup> **Eunapius**, *Lives of the Philosophers and Sophists in Philostratus and Eunapius*, *The Lives of the Sophists with an English translation by W. C. Wright*, Loeb Classical library, London, 1922, p. 477.

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 483:

<sup>18</sup> **Դավիթ Անյաղթ**, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, Եր., 1980, էջ 116:

ցատրում է փիլիսոփայության բարձրագույն աստիճանի՝ աստվածաբանության վարժանքներով, այնինչ Եվնապիոսն այդ մասին որևէ հստակ բան չի ասում, պարզապես իր ուսուցչին համարում է անտարիք ու անմահ աստվածային էակ:

Ե՛վ ժամանակի մշակութային համատեքստը պարզ դարձնելու, և՛ Պրոյերեսիոսի հանդեպ Եվնապիոսի գերադրական աստիճանի հիացմունքը հայ ընթերցողին ներկայացնելու մղումով՝ խոսքը նորից տանք իրեն<sup>19</sup>: Եվնապիոսը գրում է. «Հուլիանոսի (Պրոյերեսիոսի ուսուցիչը – Ս. Պ.) հոգին հակվեց դեպի Պրոյերեսիոսը, նրա ականջները որսում էին վերջինիս ամեն մի բառը, և նա հիացած էր Պրոյերեսիոսի հանճարի ազնվականությամբ: Եվ երբ Հուլիանոսը հեռացավ այս կյանքից, և Աթենքը ցանկանում էր նրան հավասար կարողություններով հետնորդ ընտրել ճարտասանություն դասավանդելու համար, շատ ուրիշներն իրենց անունները տվեցին այս ազդեցիկ իմաստասիրական ամբիոնը զբաղեցնելու հավակնությամբ, այնքան շատերը, որ հոգնեցուցիչ կլինեք սուկ նրանց անունները թվարկելը: Բայց այնտեղ եղող բոլորի ձայների մեծամասնությամբ ընտրվեցին Պրոյերեսիոսը, Հեփեստիոնը, Եպիփանիոսը և Դիոփանտոսը: [...] Արևելքը (Միջագետք և Սիրիա – Ս. Պ.) ձգտեց դեպի Եպիփանիոսը, Դիոփանտոսը ստացավ Արաբիան, Հեփեստիոնը գերազանցված Պրոյերեսիոսի կողմից, վերցրեց Աթենքը և շրջապատի մարդկանց, այնինչ ողջ Պոնտոսը և հարևան ժողովուրդները աշակերտներին ուղարկում էին Պրոյերեսիոսի մոտ՝ հիանալով նրանով որպես հրաշալիքով, որ իրենց աշխարհը ծնեց<sup>20</sup>: Այսպես էր վարվում ամբողջ Բյուրանիան, Հելլեսպոնտոսը, Լիդիան և Ասիան մինչև Պամփիլիա և Տավրոս: Նրան որպես հռետորության ուսուցիչ ճանաչեցին նաև ողջ Եգիպտոսն ու Լիբիան, որը բնակեցված շրջանների սահմանին է: [...] Բայց այժմ մեծ և դաժան վեճ առաջացավ Պրոյերեսիոսի բացառիկ հանճարի պատճառով, որ մնացյալ սոփեստները համախմբվելով Պրոյերեսիոսին վտարեցին Աթենքից կաշառելով պրոկոնսուլին: Աքսորվելուց հետո ծայրահեղ աղքատության մեջ հայտնվելով՝ Պրոյերեսիոսը Պիսիստրատոսի նման կարողացավ վերադառնալ: Բայց վերջինս հարստություն ուներ, որն իրեն օգնեց, այնինչ Պրոյերեսիոսին վերադառնալու համար բավարար եղավ միայն իր ճարտասանությունը, ինչպես Հերմեսը, ըստ Հոմերոսի, ուղեկցեց Պրիամոսին դե-

<sup>19</sup> Տեղը և ժամանակը խնայելու համար կարվեն տվյալ համատեքստում անկարելիոր հատվածների սղումներ [...] նշանով:

<sup>20</sup> «Մեպիական զարդ իրեանց աշխարհին» (*wsp̄er oikeion agagon*), ինչպես թարգմանել են Միսթարյանները: Սա նշանակում է, որ հայոց վերնախավի զավակները նույնպես հռետորություն ու իմաստասիրություն են ուսանել Պրոյերեսիոսի դպրոցում: Այս կապակցությամբ տեղին է հիշատակել է. Վոթսի հետևյալ դիտարկումը. «Գրիգորը [Նագիանգացին] նշում է, որ իր դասընկերների շրջանում կար հայերի մի խումբ: Զարմանալի կլինեք չմտածել, որ այդ մարդիկ սովորել են Պրոյերեսիոսի դպրոցում» (**Watts E. J.**, *City and School in Late Antique Athens and Alexandria*, University of California Press, Berkeley, LA, London, 2006, էջ 63, տող. ծան. 67):

պի Աքիլլեսի կացարան, որը շրջապատված էր իր թշնամիներով»<sup>21</sup>: Եվնապիոսն այնուհետև ասում է, որ բախտը նույնպես ժպտում է Պրոյերեսիոսին, քանի որ կաշառք վերցրած պրոկոնսուլին փոխարինում է երիտասարդ, այդ ամենից անտեղյակ ուրիշ պրոկոնսուլ: Կայսրի (Βασίλεως) թույլտվությամբ Պարույրը Աթենք է վերադառնում<sup>22</sup>: Շուտով պրոկոնսուլը նույնպես գալիս է Աթենք ու հրավիրում սոփեստների ժողով, որպեսզի լուծի վեճը: Առաջին ժողովը խափանվում է Պրոյերեսիոսի հակառակորդների կողմից, սակայն երկրորդի ժամանակ պրոկոնսուլն անսպասելիորեն կանչում է Պրոյերեսիոսին՝ դիմելով նրա ապշած հակառակորդներին. «Այժմ ես բոլորիդ կառաջարկեմ մի թեմա, որի շուրջ պիտի այսօր ճառաբանեք: Կխոսի նաև Պրոյերեսիոսը ձեզանից առաջ կամ այն հերթականությամբ, ինչ կամենաք»: Պրոյերեսիոսն առաջ գալով ամբոխի մեջ տեսնում է բազմաթիվ թշնամիների և սակավ բարեկամների, որոնք կարծես ուզում էին աննկատ մնալ: Մի պահ, կարծես, թևաթափ է լինում, սակայն, ինչպես գրում է Եվնապիոսը, «նրա պահապան աստվածությունը» օգնում է նրան, և վերագտնելով իր ինքնավստահությունը՝ Պարույրը ամբոխի մեջ նկատում է իր հետ ամենավատթար ձևով վարված անձանց, ու թեև պրոկոնսուլը պատրաստ էր քննարկման նյութը հայտնելու, առաջարկում է, որ բանախոսության թեման առաջադրեն վերջինները. «Օ՛, աստվածներ<sup>23</sup>, այստեղ են նաև այս պատվարժան և իմաստուն այրերը: Պրոկոնսուլ, հրամայե՛ք նրանց առաջարկել թեմա ինձ համար: Այդժամ գուցեև համոզվեն, որ անհարգալից են վարվել»<sup>24</sup>: Մինչ այդ երկուսը ձգտում էին խառնվել ամբոխին ու հեռանալ, պրոկոնսուլի զինվորները նրանց բերում են կենտրոն: Պրոկոնսուլը հրահանգում է տալ քննարկման թեմա՝ «հասկացությունների հստակ սահմանումներով»: Եվնապիոսն ասում է, որ նրանք առաջարկում են մի գոեհիկ թեմա, որը ճարտասանության տաղանդը ցուցադրելու սակավ հնարավորություն կարող էր ընձեռել: Պրոյերեսիոսը նրանց է նայում խիստ հայացքով և պրոկոնսուլին խնդրում բավարարել իր երկու պահանջները. տալ իրեն երկու սղագրողների, մարդկանց, որոնք ամեն օր գրառում են Թեմիսի խոսքերը: Թեմիսի անունը տալով՝ Պրոյերեսիոսն ակնարկում է, որ իրեն հարկա-

<sup>21</sup> Եվնապիոս, նշվ. աշխ., էջ 487-491:

<sup>22</sup> «Երբ նա Ոդիսևսի նման տուն վերադարձավ երկար բացակայությունից հետո իր ընկերներից քչերին գտավ լավ վիճակում», - գրում է Եվնապիոսը: Այդ ընկերներից մեկը Տուսկանիոսն է, որը նկարագրվող միջադեպի ականատեսն է եղել ու դրա մասին պատմել Եվնապիոսին: Տուսկանիոսի մասին Եվնապիոսն արտահայտվում է այսպես. «*Լիդիացի Տուսկանիոսը, որը կլիներ մի Պրոյերեսիոս, էթե Պրոյերեսիոսը չլիներ*» (Եվնապիոս, նշվ. աշխ., էջ 491):

<sup>23</sup> Նկատենք, որ քրիստոնյա Պրոյերեսիոսն օգտագործում է «աստվածներ» հոգնակիով, ինչը բնորոշ է դարաշրջանի դիսկուրսին: Անհաղթի դասախոսությունների տեքստերում ևս հանդիպում է նման կիրառություն: Սա անտիկ և քրիստոնեական մոտեցումների համադրման ևս մի նմուշ է:

<sup>24</sup> Նույն տեղում:

վոր են ոչ թե պարզապես արագ գրողներ, այլ արդարադատ գրիչներ, որոնք կգրառեն հնչած ամեն մի բառ անաչառորեն: Նրա երկրորդ խնդրանքը վերաբերում է ծափահարությունները արգելելուն: Պրոկոնսուլը երկու խնդրանքն էլ բավարարում է՝ խիստ պատիժներ խոստանալով լռությունը խախտողներին<sup>25</sup>: Պրոյերեսիոսն այնուհետև սկսում է իր ճառը, ու թեպետ լսարանը հրահանգ էր ստացել «պյութագորյան լռություն» պահպանել, սակայն չի կարողանում զսպել իր հիացմունքը՝ հնչեցնելով բացականչություններ և հառաչանքներ: Հոետորը խոսքի այնպիսի բարձունքների է հասնում, որ, ինչպես Եվնապիոսն է ասում, մարդ չի կարող անգամ երևակայել, իսկ գրիչները հազիվ էին կարողանում հասնել նրա հետևից: Այնուհետև դրույթի հիմնավորման բարձրակետին Պրոյերեսիոսը կանգ է առնում և ասում, որ այժմ հիմնավորելու է դրա հակառակ դրույթն ու դիմում է գրիչներին. «Ուշադիր հետևե՛ք, արդո՞ք ես հիշում եմ բոլոր փաստարկները, որ բերել էի նախապես»: Եվ նա իր խոսքը սկսում է երկրորդ անգամ: Այստեղ, ինչպես նկարագրում է Եվնապիոսը, ո՛չ պրոկոնսուլը պահպանեց իր հրահանգը, ո՛չ ամբոխը, այլ՝ *«ներկաները փարվեցին սովեստին ասես ինչ-որ աստծո արձանի, ոմանք համբուրում էին նրա ոտքերը, ոմանք ձեռքերը, իսկ ոմանք նրան աստված էին հռչակում՝ նմանեցնելով Հերմեսին՝ ճարտասանության աստծուն: Նրա թշնամիները ընկան փռշու մեջ, հոշոտվելով իրենց իսկ նախանձից, բայց նույնիսկ նրանցից ոմանք չկարողացան զսպել ծափահարելու իրենց ցանկությունը, իսկ պրոկոնսուլն իր թիկնապահների և ազնվականության հետ Պրոյերեսիոսին դուրս տարավ թատրոնից»*<sup>26</sup>: Այլևս ոչ ոք չհանդգնեց նրան դեմ խոսել, այլ ընդհակառակը՝ ճանաչեցին նրա գերազանցությունը. *«Պրոյերեսիոսի հանճարն ասես ինչ-որ տիրապետություն (տիրանիա) ուներ մարդկանց ուղեղների վրա, իսկ նրա ճարտասանության ուժը՝ բացառիկ բարի բախտ: Այդ պատճառով բոլոր կիրթ մարդիկ նրան էին ընտրում որպես ուսուցիչ, կամ նրա դպրոց հաճախողները դառնում էին կիրթ, քանի որ ընտրել էին Պրոյերեսիոսին»*<sup>27</sup>:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 494-495:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 496-497:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 498-499: Եվնապիոսն այնուհետև նկարագրում է, թե ինչպես է Պրոյերեսիոսը ճարտասանական մենամարտի հրավիրվում հռոմեացի Անատոլիոսի կողմից: Վերջինս Աթենքի բոլոր սովեստներին վերևից էր նայում, քանի որ կարողանում էր նրանց գերազանցել վիճարանություններում: Շուտով ձանձրանալով՝ նա մարտահրավեր է նետում Պրոյերեսիոսին, որը խոնարհաբար ընդունում է այն, քանի որ Անատոլիոսը հռոմեական ռազմական ազնվականության ներկայացուցիչ էր, և հայ իմաստասերը չէր հանդգնի նրան մերժել: Պրոյերեսիոսն իր փաստարկումներն այնպես է կառուցում, որ ինքնահավան Անատոլիոսը *«վեր է թռչում նստած տեղից, իսկ լսարանը հիացմունքի բացականչություններից շնչակտուր է լինում: Համապատասխանաբար, Անատոլիոսը նրա հանդեպ հանդես է բերում անսովոր հարգանք, այնինչ մյուսներին հազիվ թե մոտ թողներ իր սեղանին»*, - եզրափակում է իր լսածները պատմող Եվնապիոսը՝ նշելով, որ Անատոլիոսն իր ժամանակի բոլոր փիլիսոփաներից միայն Պրոյերեսիոսին էր իրապես հարգում:

Այնուհետև Եվնապիոսը պատմում է, որ Հռոմի կայսր Կոնստանտոսը նրան հրավիրում է Գալլիա՝ նստեցնելով իր սեղանի շուրջ այն մարդկանց հետ, որոնց ամենաշատն էր հարգում: Թեպետ տեղի բնակիչները ի մեծի մասի չէին հասկանում Պրոյերեսիոսի իմաստասիրական խոսույթը և չէին կարող հիանալ նրա հոգու խորհուրդներով, սակայն նրանք «իրենց հիացմունքն ու զարմանքը փոխանցում էին պարզապես իրենց աչքերի տեսածին. գմայլվում էին նրա մարմնական գեղեցկությամբ և վեհ կեցվածքով, ասես նրանց առջև լինե՞ր կոլոսի արձան, այնքան բարձր էր նա ամենայն մարդկայինից բոլոր առումներով»<sup>28</sup>: Իսկ երբ տեսան, որ ժուժկալ է և մերժում է ավելորդությունները, համարեցին, որ այս մարդը կրքեր չունի և ստեղծված է պողպատից<sup>29</sup>: Եվնապիոսն ասում է, որ Կոնստանտոսը նրան ուղարկում է հզոր Հռոմ, որպեսզի պարծենա, թե ինչպիսի մեծ մարդու վրա է թագավորում: Հռոմն իր հիացմունքն արտահայտում է փիլիսոփայի պատվին իրական չափերի բրոնզե արձան կանգնեցնելով և վրան մակագրելով. «*Regina rerum Roma, Regi Eloquentiae (Քաղաքների թագուհի Հռոմը ճարտասանության թագավորին)*»<sup>30</sup>:

Պրոյերեսիոսը շարունակում է դասավանդել մինչև Հուլիանոս «ուրացող» կայսրի գահակալությունը, երբ քրիստոնյա ուսուցիչներին դասավանդել արգելող նրա օրենքի հռչակումից հետո ստիպված է լինում որպես քրիստոնյա թողնել դասավանդումը՝ գուշակելով, որ դա ժամանակավոր միգամածություն է, որ կանցնի<sup>31</sup>: Հետաքրքրական է, որ այստեղ Եվնապիոսը սեղմ է (գուցե քանի որ ինքը հեթանոս է և ջատագովում է Հուլիանոսին), սակայն նրա երկի թարգմանիչը մեզ լրացուցիչ փաստեր է ներկայացնում. «Գահակալելուն պես Հուլիանոսը կարգադրում է, որ քրիստոնյա սովետները չպետք է հելլենական գրականություն դասավանդեն, մի որոշում, որով քրիստոնյաները կրթության ոլորտից դուրս էին մղվում: Նա բացառություն է անում միայն Պրոյերեսիոսի համար, բայց փիլիսոփան ինքն է հրաժարվում ամբիոնից»<sup>32</sup>: Չարբհանալյանն այդ մասին գրում է. «Յուլիանոս թշնամաբար բոլոր քրիստոնեայ վարժապետները հեռացուց իրենց աթոռներէն, միայն զՊրոյերեսիոս թողուց իր սուտ յուսովը, բայց այն մեծ անձն, որ ինքն իրեն և ամեն ճանչցողաց պատիւ էր կամաւ և ազատաբար հրաժարեցաւ իր աթոռէն՝ որով այնչափ բարձրացեր և որն այնչափ բարձրացուցեր էր,

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 506-507:

<sup>29</sup> Թեպետև ճակատագիրը դաժանագույն փորձության է ենթարկել նրան, նրա երկու սիրելի դստրիկները մանկահասակ տարիքում հիվանդությունից մահացել են մի քանի օրվա ընթացքում: Պրոյերեսիոսին խելագարությունից փրկել են իմաստասիրական պարապմունքները, ինչպես ցավով հայտնում է Եվնապիոսը:

<sup>30</sup> Լիբրանիոսն իր 278 նամակում խոսում է երկու արձանների մասին՝ կանգնեցված և՛ Հռոմում, և՛ Աթենքում:

<sup>31</sup> Տե՛ս Եվնապիոս, նշվ. աշխ., էջ 512-513:

<sup>32</sup> Wright W. C., Introduction // Եվնապիոս, նշվ. աշխ., էջ 330-331:

բայց անոնցմե գերագոյն դասեց ճշմարիտ հաւատոց փառքը»<sup>33</sup>:

Հուլիանոս կայսեր և Պրոյերեսիոսի հարաբերությունները բարդ էին, և դրանց մասին առավել ամբողջական պատկերացում տալու համար Է. Վոթսը, իր մենագրության մի ամբողջ գլուխ նվիրելով Պրոյերեսիոսի դպրոցին<sup>34</sup>, մի ամբողջ ենթագլուխ էլ հատկացնում է Հուլիանոս-Պրոյերեսիոս հարաբերությունների վերլուծությանը: Նա, մեջբերելով Հուլիանոսի՝ Պրոյերեսիոսին ուղղված նամակը, գտնում է, որ Հուլիանոսը դիվանագիտական խորամանկություն է քանեցնում Պրոյերեսիոսի նկատմամբ՝ նրան տալով ընտրության հնարավորություն այն դեպքում, երբ հաստատ համոզված էր, որ քրիստոնյա Պրոյերեսիոսը ոչ պատում կգրեր իր հաղթական արշավի մասին, ոչ կընդուներ դասավանդելը շարունակելու նրա առաջարկը<sup>35</sup>: Պարզապես նկատենք, որ, հաշվի առնելով հեթանոս կայսրի և քրիստոնյա իմաստասերի հարաբերությունների սառնությունը, ամենագոր կայսրի խոսույթի ենթատեքստը և զգուշությունը վկայում են այն ազդեցության մասին, որ ուներ Պրոյերեսիոսը ժամանակին, և որը չէր ցանկանում ոտնահարել նաև կայսրը՝ նրան իր շնորհից գրկելով ամենադիվանագիտական ձևով: Հուլիանոսը Կոստանդնուպոլիս գալուց անմիջապես հետո գրում է Պարոյրին\*.  
«Ինչո՞ւ ես չպետք է մտածեմ ողջունելու ազնվական Պրոյերեսիոսին, մի մարդու, որը հեղում է իր ճառերը երիտասարդության վրա այնպես, ինչպես գետերն են իրենց ջրերով ողողում դաշտերը: Մեկին, որն իր ելույթներում նմանակում է Պերիկլեսին, սակայն Հունաստանը չի գցում խառնաշփոթի մեջ, ոչ էլ իր խոսքերով է խճողում մադկանց: Հարկավ, չպետք է զարմանաք, եթե ես ձեր հանդեպ հանդես բերեմ համոզիչ լակոնիկություն: Մինչ ձեզ հարմար է երկար և տպավորիչ ճառեր հորինելը, մի քանի խոսքն ինձանից բավական է ձեզ: Դուք պետք է իմանաք, որ շատ գործեր են հեղեղում ինձ կայսրության բոլոր ծայրերից: Ինչ վերաբերում է իմ վերադարձի պատճառներին, եթե դուք պատրաստվում եք պատմություն գրել այդ մասին, ապա ես պատրաստ եմ տրամադրել ձեզ նամակներն ու պաշտոնական փաս-

<sup>33</sup> Գ. Ջարքհանալեան, Հայկական հին դպրոթեան պատմութիւն, էջ 263:

<sup>34</sup> Համեմատության համար բերենք մենագրության գլուխների վերնագրերը. «1. Ակադեմիական կյանքը Հռոմեական կայսրությունում, 2. Աթենական կրթությունը երկրորդից չորրորդ դարերում, 3. Պրոյերեսիոսը և ուշ չորրորդ դարը, 4. Աթենքը և նրա փիլիսոփայական դպրոցները հինգերորդ դարում, 5. Աթենական դպրոցների փակումը, 6. Ալեքսանդրյան ինտելեկտուալ կյանքը և Հռոմեական կայսերական դարաշրջանը, 7. Չորրորդ դարի Ալեքսանդրիայի մշակութային կյանքի հեղեղուկ տատանումները (shifting sands), 8. Ալեքսանդրյան դպրոցը հինգերորդ դարում, 9. Գալիք հեղափոխությունը» (E. J. Watts, City and School in Late Antique Athens and Alexandria, Univ. of California Press, Berkeley, LA, London, 2006): Տեսնում ենք, որ գուցեև ակամա Վոթսը մեծագույն գնահատանք է դրսևորում Պրոյերեսիոսի հանդեպ՝ դարերի հոլովություն Աթենքի ու Ալեքսանդրիայի դպրոցների մասին խոսելիս հատուկ առանձնացնելով նրա անունը: Սա, ի դեպ:

<sup>35</sup> Տե՛ս E. J. Watts, նշվ. աշխ., էջ 64-78:

\* Ըստ Վոթսի՝ գուցե սա պատասխան նամակ է՝ առ նոր կայսրը Պրոյերեսիոսի ողջույնի նամակին, որը չի պահպանվել:

տաթղթերը: Եթե, այնուամենայնիվ, դուք տրամադրված եք շարունակելու դպրոցական ճառաբանություններն ու վարժանքները մինչ ծերություն, ապա չպետք է մեղադրեք ինձ լռությանս համար»<sup>36</sup>: Վոթսը նշում է, որ Պրոյերեսիոսի ու Հուլիանոսի հարաբերությունների մասին հիշատակվում է նաև միջնադարյան բյուզանդական հանրագիտարանում՝ Suda-ում, որտեղ ասվում է, որ Պրոյերեսիոսի ծաղկունքը՝ ակմեն, Հուլիանոսի ժամանակ էր, երբ գործում էր նաև Լիբանիոսը<sup>37</sup>, որին կայսրը խրախուսում էր՝ մի կողմից գուցե իրոք հիանալով նրանով, բայց նաև նպատակ ունենալով ցավ պատճառել մեծ փիլիսոփա Պրոյերեսիոսին<sup>38</sup>: Պարույրի մասին պատմվում է նաև Jerome Chronicle - ում. «Պրոյերեսիոսը, Աթենացի սոփեստը, դպրոցն իր կամքով թողեց, երբ գործողության մեջ դրվեց քրիստոնյա ուսուցիչներին ազատ արվեստները դասավանդելն արգելող օրենքը: Չնայած այն փաստին, որ կայսր Հուլիանոսը բացառություն էր արել նրա համար, և նա կարող էր դասավանդել որպես քրիստոնյա»<sup>39</sup>: Ինչ վերաբերում է Suda-ին, Վոթսը նշում է, որ այնտեղ թյուրիմացաբար Պրոյերեսիոսի ծննդավայր է համարվում Կապադովկիայի Կեսարիա քաղաքը, որը Պրոյերեսիոսի ուսուցիչ Հուլիանոսի ծննդավայրն էր: Ըստ Վոթսի՝ Պրոյերեսիոսը ծնվել է 276 թ. Հայաստանի այն մասում, որը վերահսկում էր Հռոմը: 18 տարեկան հասակում նա և իր ընտանիքը ստիպված են լինում թողնել Հայաստանը և գնալ Անտիոք<sup>40</sup>: Եվնապիոսը պարզապես ասում է, որ երբ Պրոյերեսիոսը պատանի էր, ճակատագիրը ստիպեց նրան թողնել Հայաստանն ու մեկնել Անտիոք, որտեղ նա երկար ժամանակ աշակերտում է տեղի ուսուցիչ Ուլպիանոսին<sup>41</sup>: Պարույրը ցանկանում էր մեկնել Աթենք, սակայն նրա միջոցները չէին ներում: Խոսելով Պրոյերեսիոսի աղքատիկ միջոցների մասին՝ Եվնապիոսը նշում է, որ նա լավ ընտանիքից էր սերում: Վոթսը որոշ փաստերի համադրությամբ ենթադրում է, որ Աթենքում Պրոյերեսիոսը 20-30 տարի աշակերտել է Հուլիանոսին և նրա մոտ ծառայել որպես օգնական մինչև այն ժամանակը, երբ Հուլիանոսը ճանաչում է ձեռք բերել Աթենքում: Վոթսը փորձում է, Եվնապիոսի և պահպանված այլ աղբյուրների տվյալները համադրելով, վերակազմել թե՛ Աթենքի փիլիսոփայական դպրոցի գործունեության կերպը, թե՛ Պրոյերեսիոսի կյանքի մանրամասները՝ նշելով, որ արտրից վերադարձի գործում մեծ դեր են կատարել նրա քրիստոնյա լի-

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 64:

<sup>37</sup> Հեթանոս փիլիսոփա, ում նամակներից մեկում հիշատակվում է Պրոյերեսիոսի պատվին կանգնեցված երկու արձանների մասին:

<sup>38</sup> Suda, I, 486: Մեջբերվում է ըստ Վոթսի մենագրության (տե՛ս Watts E. J., նշվ. աշխ., էջ 68):

<sup>39</sup> Jerome, Chronicle, 242-243: Մեջբերվում է ըստ Վոթսի մենագրության (տե՛ս Watts E. J., նշվ. աշխ., էջ 71):

<sup>40</sup> Տե՛ս Watts u E. J., նշվ. աշխ., էջ 49:

<sup>41</sup> Տե՛ս Եվնապիոս, նշվ. աշխ., էջ 485:

նելն ու կայսր Կոնստանտոսի հովանավորությունը վայելելը: Դա, սակայն, չի նսեմացնում Եվնապիոսի նկարագրած հռետորական բանավեճում Պրոյերեսիոսի տարած փայլուն հաղթանակի կարևորությունը: Չորրորդ դարի Աթենքում փիլիսոփայական դպրոցը մի վայր էր, որտեղ կրթություն էին ստանում հասարակության ռազմաքաղաքական վերնախավի զավակները և ապագա կայսրերն ու մեծ զորավարները, և այդ դպրոցում ամբիոն ունենալն իրոք և՛ ազդեցիկ էր, և՛ պատկառելի: Պրոյերեսիոսն ըստ ամենայնի մինչև 90-ամյա հասակը դեռ դասավանդելիս է եղել, քանի որ Հուլիանոս Ուրացողի արգելքը տևել է 1-2 տարի<sup>42</sup>, որից հետո նա կարող էր շարունակել իր գործը մինչև իր մահը՝ 366 թվականը: Փաստորեն մոտ 5 տասնամյակ նա անմիջական ազդեցություն է ունեցել հունախոս ազնվականության կրթության գործի վրա: Ցավոք, նրա դասախոսությունները, ճառերը չեն պահպանվել, սակայն հանձին նրա մենք տեսնում ենք մի մտածողի, որի համար փիլիսոփայությունը կենսաձև էր, ապրելակերպ, և որն իր ապրած «փիլիսոփայական կյանքով» հիացմունքի էր արժանանում ժամանակակիցների կողմից<sup>43</sup>:

Վերջում նշենք Պարույր Հայկազնի գործունեությանը բնորոշ ևս մեկ կարևոր հանգամանք, որը, ցույց տալով դարաշրջանի մտագործելակերպի առանձնահատկություններից ևս մեկը, հետաքրքիր կերպով կարող է նպաստել Դավիթ Անհաղթի ժառանգությունը առավել ամբողջական և ոչ կանխակալ գնահատելու համար: Դա այն հանգամանքն է, որ Պարույրը, լինելով քրիստոնյա ու դասավանդումից հրաժարվելով Հուլիանոս Ուրացողի գահակալության տարիներին, ոչինչ չի անում իր դասավանդած նյութի բովանդակության մեջ քրիստոնեական բաղադրիչ ներմուծելու համար, ընդհակառակը՝ մատուցում է ավանդական հելլենիստական նյութը: Վոթսը, այս փաստի շուրջ մտորելով, գրում է. «Չնայած այն հանգամանքին, որ հանրությունը Պրոյերեսիոսին ընկալում էր որպես հռետորության քրիստոնյա ուսուցիչ, վերջինս դուրսնինչ ջանք չէր թափում քրիստոնեության տարրերը իր դպրոցի կյանք ներմուծելու համար: Այդ մասին կարող ենք դատել նրա աշակերտների՝ Գրիգոր Նազիանզացու և Բարսեղ Կեսարացու գրույթներն ուսումնասիրելով: Գրիգորն ու Բարսեղը քրիստոնյա էին, սակայն դպրոցը գրավիչ էր նաև հեթանոսների համար: Ամենայն հավանականությամբ

<sup>42</sup> Հուլիանոսի 362 թվականի արգելքը տևել է մինչև 363 թ., երբ նա արշավանքներից մեկի ժամանակ զոհվում է, իսկ նրան հաջորդող Հուլիանոս կայսրը հրահանգում է թույլատրել դասավանդումը բոլոր նրանց, ովքեր ունեն համապատասխան որակներ՝ անկախ կրոնական պատկանելությունից (տե՛ս **Watts** u **E. J.**, նշվ. աշխ., էջ 76):

<sup>43</sup> Գրիգոր Նազիանզացին և Բարսեղ Կեսարացին Աթենքի դպրոցն ավարտելուց հետո նույնպես որոշում են վարել «փիլիսոփայական կյանք» (առավել մանրամասն տե՛ս **Ruether R. R.**, Gregory of Nazianzus, Rhetor and Philosopher, Oxford, Clarendon Press, 1969, էջ 28-29):

դպրոցի ուսանողների մեծամասնությունը հենց հեթանոսներն էին»<sup>44</sup>: Ուսումնական ծրագիրը ավանդական բովանդակություն ուներ, որում գերակշռողը ոչ քրիստոնեական՝ հելլենիստական նյութն էր: Պրոյերեսիոսի կյանքի այս հանգամանքը մեզ ցույց է տալիս, որ հնարավոր է լինել քրիստոնյա՝ դասավանդելով հելլենիստական բովանդակություն, ինչը Դավթի երկերի որոշ հետազոտողների համար կռվան է դարձել այն փաստարկի օգտին, որ նորպլատոնական հունախոս Դավիթը չէր կարող լինել քրիստոնյա<sup>45</sup>: Տեսնում ենք, որ դարաշրջանի համադրական մշակություն հնարավոր են նման երևույթներ, և քրիստոնյա լինելն ու հելլենիստական բովանդակությամբ դասախոսություններ կարողալը միմյանց չեն բացառում: Պարզապես արդի հետազոտողները պետք է հրաժարվեն որոշ կարծրատիպերից, որ նեոսխոլաստիկ կերպով ձևավորել են ուսումնասիրվող դարաշրջանի մշակույթի հանդեպ: Նրանցից մեկը՝ Ռ. Ռոյթերը, խոստովանում է. «Անկասկած, եթե Պրոյերեսիոսի ճարտարախոսության մեծ երկրպագու հեթանոս Եվնապիոսը մեզ չհայտներ, որ Պրոյերեսիոսը քրիստոնյա էր, մենք ոչ մի պատճառ չէինք ունենա նման բան ենթադրելու»<sup>46</sup>: Փաստորեն, Դավթի քրիստոնյա լինելու մասին հայերեն աղբյուրներում պահպանված տեղեկություններ անվստահելի է համարվում այն պատճառով, որ Եվնապիոսի նման որևէ այլ հունախոս հեղինակից չի պահպանվել այդպիսի վկայություն, ինչը այսօրվա գիտական ընկալումների դաշտում «կլեգիտիմացներ» այդ փաստը: Եթե նախկինում Դավթի հայ ու քրիստոնյա լինելու օգտին փաստարկելու համար դիմել էինք լատինախոս Բոեցիոսի անալոգիային<sup>47</sup>, ապա այժմ պարզ տեսնում ենք, որ Պրոյերեսիոսի մասին պահպանված տեղեկությունը ևս մեկ անալոգ է, որ կարող է նպաստել Դավթի անձնավորության, դավանանքի և ժառանգության խնդիրների ուսումնասիրության դաշտում առկա կնճռոտ հարցերի լուծմանը: Սակայն դա մեկ այլ ուսումնասիրության խնդիր է, քանի որ դրանից բխող որոշ շատ հետաքրքրական հետևություններ դեռ կարիք ունեն լրացուցիչ հիմնավորման: Ի վերջո, այս ամենը արժեքավոր է որպես հայոց օժտվածության, պատմական ճակատագրի ու ժամանակի քաղաքակիրթ աշխարհում ներկայության ու ներդրման մասին ևս մեկ վկայություն:

**Բանալի բառեր** – *Պրոյերեսիոս, Դավիթ Անհաղթ, ուշ անտիկ դարաշրջան, Եվնապիոս, փիլիսոփայության աթենական դպրոց*

<sup>44</sup> Watts E. J., նշվ. աշխ., էջ 64:

<sup>45</sup> Տե՛ս Wildberg, Ch., Three Neoplatonic Introductions to Philosophy: Ammonius, David, Elias, Hermathena, № 149, Special Issue: The Heritage of Platonism, (winter, 1990), էջ 33-51:

<sup>46</sup> Ruether R. R., նշվ. աշխ., էջ 20:

<sup>47</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Ս. Ս. Պետրոսյան, Դավիթ Անհաղթի հոգու խնամքի իմաստասիրությունը և արդիականությունը, Էջմիածին, 2017, էջ 70-73:

**СИЛЬВА ПЕТРОСЯН – Великий армянский ритор и философ – Паруйр Айказн (Прозэресий).** – Статья посвящена выдающемуся ритору и философу IV века, главе афинской философской школы Проэресию (Паруйр Айказн), который был христианином, но преподавал традиционную эллинистическую программу. Случай Проэресия показывает, что для менталитета поздней античности это было приемлемо, и нет достаточных оснований отрицать то же самое в отношении другого выдающегося армянского философа Давида Непобедимого. Проэресий был очень популярен в Римской империи, и с ним общались по крайней мере два императора. Как говорит Евнапий, император Констант отправил его в Рим, испытывая честолюбивое стремление показать, сколь несравненными людьми он управляет. И даже Юлиан Отступник, который запретил всем христианским софистам преподавать свободные искусства, сделал исключение для Проэресия, позволив ему, христианину, преподавать. Но Паруйр отказался, отдав предпочтение своей вере. К сожалению, ничего из написанного Проэресием не сохранилось, но многое доказывает его влиятельное присутствие в афинских философских кругах. Напротив, почти нет свидетельств присутствия Давида в греческом культурном мире той эпохи, зато сохранились тексты его лекций на греческом языке. И исследовать обстоятельства жизни Проэресия важно не только само по себе, но также чтобы увидеть и в Давиде представителя той же культуры мышления и философствования.

**Ключевые слова:** *Прозэресий, Давид Непобедимый, поздняя античность, Евнапий, афинская школа философии*

**SILVA PETROSYAN – The Great Armenian Rhetor and Philosopher: Paruyr Hajkazn (Prohaeresius).** – The article is devoted to the eminent rhetor and philosopher of the IV century, the head of the philosophical school of Athens, Prohaeresius (Paruyr Hajkazn), who was Christian but taught the traditional Hellenistic curriculum. Prohaeresius's case shows us that for the mentality of late antiquity it was acceptable, and there is no sufficient base to deny such a circumstance concerning the other eminent Armenian philosopher David the Invincible. Prohaeresius was very popular in the Roman Empire, and at least two emperors communicated with him. As Eunapius tells us, the emperor Constans dispatched him to mighty Rome, because he was ambitious to show them there what great men he ruled over. And even Julian the Apostate, who forbade all the Christian sophists from teaching the liberal arts, made an exception for Prohaeresius permitting him to teach as a Christian. But Paruyr resigned himself preferring his faith. Unfortunately, nothing written is survived from Prohaeresius, but there is a lot of evidence of his influential presence in Athenian philosophical circles. On the contrary, there is almost no evidence about David's presence in the Greek world of the time, except surviving texts of his lectures. And information about Prohaeresius is important not only by itself but also for understanding David as a representative of the same culture of thinking and philosophical life of the late antiquity.

**Key words:** *Prohaeresius, David the Invincible, late antiquity, Eunapius, Athenian school of philosophy*

Ներկայացվել է՝ 02.05.2019

Գրախոսվել է՝ 25.05.2019

Ընդունվել է տպագրության՝ 27.06.2019